

Վ Ա Ճ Ա Ռ Ա Կ Ա Ն

Թիֆլիսի առևտրական զագեր:

Հրատարակում է շաբաթը մէկ անգամ կէս թերթ, կիրակի օրերով: 10 տմովայ զինը Մարտից մինչև Յունիսը քաղաքում 2 ման. 50 կոպ., դուրսը 3 մանկի:

ՇԱԲԱԹԱԿԱՆ ԹԵՐԹ
(ԱՌԱՋԻՆ ՏԱՐԻ)

Գաղթին ստորագրուի կարելի է խմբադրով մօտ:
Գաղթումը հրատարակվելու կընդունվին մասնաւոր յայտարարութիւններ: Գների մասին կարելի է խմանալ խմբադրատանը:

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ:

Տէրութեան կարգադրութիւնները: Ծառայողներին փոխութիւնները: Տօրգերը: Առուտորի մէջ մերկանդիկան ուսումն ու քաղաքական տնտեսների ուսումը: Մանրամասը տեղեկութիւններ Ապրիլի 4 անցքի մասին: «Գարուն» անունով ժուրնայի 1 Ձեռք: Բամբակի մասին մէկ երկու խօսք: Առևտրական տեղեկութիւններ:

ՏԵՐՈՒԹԵՆԻ ԿԱՐԳԱԴՐՈՒԹԻՒՆՆԵՐԸ:

ՇԱՌԱՅՈՂՆԵՐԻ ՓՈՓՈԽՈՒԹԻՒՆՆԵՐԸ:

Ապրիլի 8-ին:

Արձակվում են ծառայութեանը Թիֆլիսի Մահմադականների Ալիու ուսումն ուսումնարանի Ռուսաց լեզուի վարժապետ, Կոլեժակի Սովետնիկ ԽիճՐՈՎԸ և Ախալցխայի նահանգական ուսումնարանի պատուաւոր վերատեսչի պաշտօնակատար Իւնկէր ՄՈՒԹԱՅԱՆՅԸ:

ՏՈՐԳԵՐ:

Կովկասի Կաղեմնի Պալատումը Մայիսի 20-ին նշանակած է Գուշկի և Ղենքարանի մէջ մտած խմբիչների բաժ ժողովելու իջարով տալու տորգը:

Օկրուժնոյ Խնտնդանտի կառավարութեանումը Մայիսի 19-ին նշանակած է Ուսուլարի 2-դ կարգի հիւանդանոցի համար հարկաւոր նիւթերը հասցնելու տորգը:

Օկրուժնոյ Խնտիների կառավարութեանումը Մայիսի 6-ին նշանակած է Թիֆլիսի մէջը գտնված զինուորականների շինութիւնների կարկատանն անելու տորգը: Էս գործի համար նշանակած է 12,600 մ.

Էլի Էստեղ նշանակած է Յունիսի3-ին Դադստանի գաւառի Պետրովսկ քաղաքումը հիւանդանոց շինելու տորգը: Էս գործի հա-

մար նշանակած է 259,713 մ. 85 կ:

Թիֆլիսի գաւառական կառավարութեանումը Մայիսի 6-ին նշանակած է Թէլաւումը գտնված քահանայ Զաքար Գոգունովի 5000 մ. զին զրած տան ծախելու տորգը:

Էլի Էստեղ նշանակած է Մայիսի 23-ին Շտարս կապիտանի կին Նինո Բուչենակու Թիֆլիսի 1 մասումը և 1 կվարտալումը զըտնված և 2000 մ. զին զրած տան ծախելու տորգը:

Թ Ի Ֆ Լ Ի Ս

Ապրիլի 30-1866.

Մինչև 19-դ դարի սկզբները Եւրոպայումը տարածված էր էն կարծիքները փողի մասին, որին ասում են մերկանտիլեան ուսում: Էդ ուսումնի հետևողները ասում են թէ «փողն է հարստութիւն: Եթէ մենք կարողանայինք ամենքին բաւական փող բաժանել, էն ժամանակը ամենքն էլ հարուստ կլինէին: Ուրեմն ժողովներ փողը: Թող օտար ազգերը մեզ համար ապրանքներ չբերեն ու փողը չըդուրս տանն, այլ եթէ կամենում են, թող դան ու առնեն մեր ապրանքները, իրանց ունեցած փողը մեզ տալով: Մաքսատները, տարիքները իրանց բարձր մաքսերով—ոսկու և արծաթի դուրս տանելու արգելքները—ասհա սրանք են հարստութեան պայմանները»: Էսպէս են կարծում մերկանտիլեանները:

—Ի՞նչպէս կարելի է փողը հարստութիւն համարել. մի՞թէ օտարների վրայ ծախելով մեր ապրանքները ու տեղը ու-

կի ու արծաթ ստանալով, մենք կարող ենք հարուստ ու բաղաւոր համարվել. չէ, հարստութիւնը էն ապրանքներն են, որ մեզ կենքի համար պէտք են գալիս և ոչ թէ փողը: Եթէ մարդիկ լէին մերկանտիլեաններին, էն ժամանակը մենք մեր բոլոր ապրանքները պէտք է դուրս տանէինք սահմանից դուրս ու տեղը ոսկի բերելով, ինքնեքս քաղցած ու տկլոր մեռնէինք ոսկով լեբը անտուկների վրայ: Էսպէս են պատասխան տալիս քաղաքական տնտեսները:

Մերկանտիլեան ուսումը տիրել էր աշխարհիս մինչև 18 դարի վերջերը: Մինչև էդ ժամանակները կարծում էին ամենքը, թէ էդ իբրեւ մէկ ճշմարտութիւն է: Բայց Անգլիացի Ադամ Սմիտ անունով տնտեսը իր «Ազգերի հարստութիւն» կոչված շարադրութեանով քանդեց էդ ուսումնի հիմքերը և զրա հետևողները բաժանվեցան երկու խումբ— յետադէմ և յառաջադէմ: Մերկանտիլեան յետադէմները պաշտպան են էն սխտեմային, որով արգելվում է ապրանքների անմաքս բերելը— յառաջադէմները ընդհակառակը քարոզում են առևտուրի ազատութիւնը և պահանջում են մաքսատների վերացնելը:

Ո՞ր խումբն է զբանցից դրուստ: Մենք պատասխան են տալիս՝ ոչ մէկը, որովհետև երկուսն էլ մէկ նպատակ ունին առաջներին, միայն թէ նպատակին հասնելու համար զանազան ճանապարհներ ունին ընտրած: Տեսնենք:

Մերկանտիլեան ուսումնի հետևողները

րի կարծիքով բոլոր հարստութիւնը փողի մէջն է և էս պատճառով ասում են նրանք, թէ մենք մեր փողը չպէտք է դուրս տանենք մեր երկրիցը. այլ ընդհակառակը ինչքան շատ ստանանք, էնքան լաւ է մեզ համար»:

Էդ բանին անտեսները շատ օրինաւոր պատասխան են տալիս «ծախեցէք ուրեմն ձեր բոլոր ապրանքները օտար երկրացիներու վրայ ու ինքներդ քաղցած մեռէք ոսկով լիքը սնտուկներով վրայ»:

Տնտեսների էս պատասխանը բոլորովին ջարդում է մերկանտիլեան ուսումնի հիմքերը: Բայց տեսնենք իրանք յառաջագէտ տնտեսները ի՞նչ են ասում: Նրանք ասում են թէ, «պզգըրի մէկըմէկու հետ ունեցած առուտուրի մէջ ապրանքները փոխվում են ապրանքների վրայ. փողն էլ ապրանք է, ուրեմն մեր երկրիցը դուրս տարած ապրանքների տեղը յետ բերած ապրանքների և հենց փողն արժողութիւնը հաւասար է դուրս տարած արժողութիւնին: Բայց էդ ոսկին պէտք չէ դալիս ուտելու և հազնելու համար, այլ միայն առուտուրի գործիք է: Ուրեմն մեզ համար աւելի օգտաւէտ է ոսկին տալ, քան թէ ստանալ: Քանի էլ որ քիչ փող ստանանք ու շատ ապրանքների էնքան աւելի հարուստ կլինենք»:

Ուրեմն մեր ունեցած բոլոր փողերը տանք օտար ազգերին ու պահենք մեզ համար միայն ապրանքները. մենք էն ժամանակը հարուստ կլինենք: Ի՞նչ կանենք փողը, երբ որ դրան ոչ կարելի է ուտել, ոչ հագնել: Մեզ հարկաւոր է հաց, միս մահուդ և ուրիշ ապրանքներ՝ էդ բաներն ունենալով մենք քաղցած չենք մեռնիլ. բայց միմիայն ոսկի ունենալով քաղցած կմնանք: Ուրեմն առանց փողի առուտուր սկսելով ստիպված կլինեն մօրդիկ մէկըմէկու հետ ապրանքներ փոխել: Բայց էտեղ անթիւ դժուարութիւններ կարող են պատահիլ: Թրինակ ամեն մարդ հացի կարիք ունի, բայց հացի տէրը կարող է մահուդի, ապրելու մի, շաքարի կամ մէկ ուրիշ ապրանքի կարիք չունենայ, ուրեմն դրանք մէկըմէկու հետ չեն կա-

րող փոխել իրանց ապրանքները: Էդպէս ահա պարզ երևում է, որ առանց փողի առուտուրը շատ դժուար է, և անկարելի: Ուրեմն մարդիկ ոչ միմիայն փողով առանց ապրանքների և ոչ միմիայն ապրանքներով առանց փողի ապրել չեն կարող: Քաղցածութենից կմեռնէին մարդիկ, եթէ որ փորձ փորձէին գործ դնել կեանքի մէջ թէ մերկանտիլեան ուսումը և թէ ազատ առուտուրի ուսումը: Էդ բանը հենց իրանք քաղաքական տնտեսները գլուժ են, խոստովանելով թէ փողը փոխառութենի և առուտուրի ամենահարկաւոր միջոցն է, փողը էնպիսի ապրանք է, որի արժողութիւնը շատ քիչ է փոխվում: Փողով ամենքը կարող են ձեռք բերել ինչ որ կամենան. փողը ստեղծում է էհօրբար և այլն»:

Ուրեմն թէ մերկանտիլեան ուսումնի հետեղները և թէ տնտեսները մի և նոյն եզրակացութենին են հասնում, թէ «առուտուրի և էհօրբարի համար հարկաւոր է փող, ոսկի և արծաթ. առանց փողի անկարելի է կարավարել»:

Տեսա՞ք հիմի որ էդ երկու հակառակ կողմերը մի և նոյն նպատակին հասնում:

Ա. Ն.

ՄԱՆՐԱՄԱՍԸ ՏԵՂԵԿՈՒԹԻՒՆՆԵՐ ԱՊՐԻԼԻ 4 ՊԱՏԱՋԱԾ ԱՆՑՔԻ ՄԱՍԻՆ:

Ապրիլի 4-ին կեսօրից յետոյ սահաթի 4 լրանալիս Պետերբուրգումը ԹԱԳԱՒՈՐ ԿԱՅՍՐԸ Գուքս Նիկոլայ Մաքսիմիլիանովիչ Լեյխտենբերգսկու և նրա քոյր Բադենի Մաքսիմիլիանովիչի հետ Լեսնի կոչված այգումը դրօսներուց յետոյ, դուրս էր գալիս Նիկոլ գետի կողմը գտնված դռներիցը իր կառքը նստելու: Էդ ժամանակը մէկ ջահել տղայ առաջ էր քաշվում դէպի Թաղաւորը դիւղացի Օսեփ Կոմիսարովի մօտով: Կոմիսարովը վաղուց նկատել էր էն ջահել տղայի անհանգիստ լինելը և առաջ քաշվելը. բայց որովհետեւ ինքն էլ ուզում էր աւելի մօտիկ տեսնել Թաղաւորին, չէր առաջ թողնում էն ջահել տղային: Երբ որ Թաղաւորը դուրս եկաւ այգուցը, էն ջահել տղան էնպէս սաստիկ վրայ պառկեցաւ Կոմիսարովին, որ սա կամայ պառկայ հետ քաշվեցաւ և նրան առաջ թողեց: Են ջահել տղայի վրայ նրա արարմունքը դարձրուց Կոմիսարովի ուշադրու-

թիւնը և սա հետեւում էր նրան: Թաղաւորը երբ որ ծածկում է էլէլ վերաբերուն ու նստում էլէլ կառքը, Կոմիսարովը տեսել է, որ էն ջահել տղան հանել է իր պալտօի տակից արձանակ (դարանչա) և միջնում է էլէլ Թաղաւորին: Էդ բանը առաջ առաջ տեսնում է մօտիկ կանգնող Պոլիցիայի պահապանը և բղավում է: Կոմիսարովը էդ բոլորին էնպէս սաստիկ խփում է չարագործի ձեռքին չարամախը քաշելիս, որ չարագործի ձեռք դուրս է և արձանակը դուրս է ընկնում, բայց Թաղաւորին չէ տալիս: Թաղաւորի կեանքը փոխնդի մէջն էր: Չարագործը փախչում է, բայց նրան բռնել է ժողովուրդը կառքից 15 սաժեն հեռու: Ասում են թէ ժողովուրդը բռնել է չարագործին և խեղդում է էլէլ, բայց Թաղաւորը խմանալով էս բանը, դնացել է ժողովրդի մօտ, հրամայել է ձեռք չտալ: Թաղաւորը հարցրել է չարագործին, թէ ինչ աղդ է և ինչի համար է արել էս բանը. նա պատասխան է տալիս, թէ «ես Ուուս եմ և էնդուր համար արի էս բանը, որ Գուդիւղացիների խեղի հողը, խարեցիր»: Յետոյ դառնում է չարագործը դէպի ժողովուրդը, առելով թէ «ես ձեզ համար եմ գլուխ յետ դրել և դուք չեք հատկանում»: Թաղաւորը էլ էր կար չինքնելով հրամայում է էնտեղ գտնված ղինուտարկաններին բռնել չարագործին, դնաց ինքը իր պալտը և էնտեղից շուտով Ղազանու մայր եկեղեցին՝ Ատոմծուն հորհակալութիւն մատուցանելու իր հրաշալի կերպով ազատվելու համար: Էդ ժամանակը Լեյխտենբերգի գուքսը և Բադենի դքսուհին գնում են Թաղաւորական խորհրդարանը (Գոսուդարստվեննի սովետ) Կոստանալին Նիկոլայի յայտնելու էս անցքը: Ինչպէս Կոստանալին Նիկոլայի յայտնելու էս անցքը, և խորհրդարանի բոլոր անդամները և ատորձանաւորները իսկոյն դնում են Թաղաւորին հորհակալութիւն էսպիսի հրաշալի կերպով ազատվելու: Միւսներն էլ պատմում են, թէ Կոմիսարովի արած բանը իսկոյնից ոչով չէ նկատել: Երբ որ Թաղաւորը դնացել է, ժողովուրդը մօտ է էլէլ խումբ խումբ և խօսում է էլէլ անցքի վրայ: Էդտեղ կանգնած է էլէլ և Կոմիսարովը: Մէկ նեմնց, որ նկատել է Կոմիսարովի արածը, պատմել է միւսներին և շատերը բռնել են ու փաթաթվում են էլէլ Կոմիսարովին: Գնեկրալ-Ալիւտանտ Տոտլբերգը, որն որ նմանապէս էդ ժամանակը էն այգումը դրօսներուց յետոյ հետ է էլէլ դառնում և տեսնելով էս բանը, իմացել է պատճառը և հասկանալով Կոմիսարովի արածի նշանակութիւնը, նստեցրել է իրա հետ կառքումը և տարել է Թաղաւորի պալատը:

դրաբառ և թաղեաթեանցի ամենաանյաջող դործերնցն է։ Եւք բանը տալելով Գարունի խմբադրողը վտանգի մէջ է զյել թաղիաթեանցի անունը, որ իր մէկ քանի տաղերով և ճանապարհորդութիւններով պատուաւոր տեղ ունէր հայերի աչքումը։

Երբ է էլել Հայաստանումը օրինաւոր դաստիարակութեան ձևեր, թող ցոյց տար դա մեզ մնաողները։ Որտեղ կանանց անուններ է տեսել հայոց պատմութեան մէջը, բոլորին էլ հանդէս է դուրս բերել իրը դաստիարակութեան օրիգինալ։ Ինչի խաբել ժողովուրդը։ Ամենքի համար պարզ բան է, որ հիմի ժամանակիս պահանջած ձևերն ու ուղղութիւնն ունէ դաստիարակութիւնը։ Ինչպէս կարելի է հայերին վեր առնել 19-դ դարիցը տանել 4 և 5 դարը։ Եւք մարդուս բանականութենէն ընդդէմ բանէ։ Եւ Ինչպէս կարելի է, որ հենց միայն հայերը ընդդիմանան էն բանին, որ ընդունել է բոլոր լուսաւորված աշխարհը. եւ Ինչպէս կարելի է կոյր ֆանատիկոսութիւն։

Խմբադրողը, կամենալով զրել Գրիստոնէական եկեղեցու պատմութիւն, սկսում է էս խօսքերով։ «Նաե ոմանք աշխարհական անձինք մեզանում, փոխանակ Հայոց երեւելի ուսումնարաններում տալու Հայ ազգի մանուկներուն ուսանել իրանց եկեղեցւոյ ուղղափառ վարդապետութիւնը, ուղարկում են Գերմանացւոյ ուսումնարանները. ուր ուսանում են նոցա զանազան Աստուածաբանութիւնը և նոցա կրօնը և ապա յետ դալով իրանց հայրենիքը սկսում են ոմանք սերմանել Գերմանացւոյ վարդապետութիւնը ազգի մէջ և պատճառել երկպառակութիւն»։

Մենք հաւատարմ գիտենք, որ մեղանից եթէ էլ էլ են Գերմանիա ուսումն առնելու գնացողներ—չեն գնացել Աստուածաբանութիւն սովորելու, այլ կեանքին հարկաւոր գիտութիւնները և արհեստները սովորելու. որոնց օրինակները աչքներին առաջն ունինք։ Եւտեղ ուսումն առնելուց յետոյ Եւրոպայի ուսումնարաններումը կատարեալգործվելը ոչ թէ ամօթ է հայերին համար, այլ մեծ պատիւ։ Բայց եթէ խմբադրողին զորդ յայտնի էին էդպիսի հաւատարմիս Աստուածաբանները ինչի էլ յիշել նրանց անունները։ Լուսաւորութիւնը և ուսումը ոչ մէկ ժամանակ վրնաս չեն տալիս մարդուս կրօնին, այլ աւելի և աւելի հաստատ է պահում մարդուն իր ազգութենի մէջը։ Խալ է էն ուսումնականութիւնը, իրը որ մարդ սառն է դէպի իր ազգը և կրօնը։

Գարունի խմբադրողի կողմից մեր ուսումնականների համար հոգալը աւելորդ է բոլորո-

վին. նրանք աւելի լաւ են հասկանում իրանց պարտականութիւնները։

Եւ Ինչի էտպէս անուայելուց կերպով շարժել էտպիսի երեւելի հարցերը մեր մէջ համարեն թէ առաջին անգամ—աղջկանց դաստիարակութիւնը, աղղափոխութիւնը և դրանց նման բաներ։ Եթէ խօսվի դրանց վրայ, մեր կարծիքով պէտք է խօսվի միայն էն բաները, ինչ որ քարոզում են լուսաւորված ազգերը իրանց ժողովուրդին։ Պէտք է աշխատել դաստիարակութեան և կրթութեան հիմնովան նոր միջոցները և ուղղութիւնը տարածել հայերի մէջ էլ—և ոչ թէ հինգերորդ դարի աղջկանցը նմանացնել հիմնովան մեր աղջկանցը։ Գուք նոր ուղղութեանով դաստիարակեցէք ձեր աղջկանցը և կանանք, որ հիմնովանները մեր վաղուցվան աղջկանցից աւելի բարձր կլինին ամեն բանով թէ հասկացողութեանով, թէ անտեսականութեանով ու լաւ տանտիրութեանով, նմանապէս և կրօնասիրութեանով և ազգասիրութեանով։

ԲԱՄԲԱԿԻ ՄԱՍԻՆ ՄԵԿ ԵՐԿՈՒ ԽՕՍԲ։

Աշխարհիս վրայ, բացի հացը, բնութենի մէջը ոչ մէկ բերք չկայ, որ էնքան շատ և ընդհանուր գործածութիւն ունենայ, ինչպէս բամբակը։ Հնդկաստանումը, Չինաստանումը և Եսպանիայումը, որտեղ որ ընդհանուր մարդկութեան մեծ մասն է բնակվում, բոլորն էլ բատ մեծի մասին բամբակեղէն են հագնում. բայց դեռ Եւրոպացիքը էնպէս մօտիկ չեն ծանօթ եղ երկիրներին, որ կարողանային հաշել եղ տեղերի գործածած բամբակի սրքանութիւնը։ Եւրոպացիքը սովորեցան գործածել ոչ թէ Ատիայի, այլ Ամերիկայի բամբակը։

Ինչքան յայտնի է, ամեն տարի լուսաւորված երկիրներումը, կամ աւելի լաւ ասել, մեղ յայտնի էլած առեւտրական աշխարհումը գործ է ածվում մօտ 55,830,000 փութ բամբակ։ Եւք գումարի մօտ երեքից երկու մասը տալիս են միայն Ամերիկայի Միացած Նահանգները, մնացած երեքից մէկ մասը հասցնում են միւս բոլոր երկիրները, որոնք որ ընդունակ են բամբակ տալու։

1855 թւին Ամերիկան մօտ 132,000,000 մանեթի բամբակ տվեց։ 1859 թւին բամբակ գործածվեցաւ Միացած Նահանգներումը 772,000 հակ, Անգլիայումը 2,315,000 հակ, Ֆրանսիայումը 425,000 հակ, մնացած Եւրոպայումը 855,000 հակ։

Անգլիան գործ է ածում էնքան բամբակ, ինչքան մնացած միւս երկիրները բոլորն էլ միասին։ Երբ որ Անգլիայումը բամ-

բակի ներատանելու մաքսը վերացրին, գործածութիւնը աւելացաւ 16 անգամ։ Մեքսիկայում Անգլիայի գործարարը էնքան բամբակեղէն է գործում, ինչքան էլ Հնդկացի 100 գործողները իրանց ձեռներով։

Քանի էլ լուսաւորված է ժողովուրդը, էնքան աւելի բամբակեղէն է գործածում։ Անգլիայումը հաշիւներից երեսում է, որ մէկ մարդու վրայ 24 ֆունտ բամբակ է գործածվում, բայց Տաճկաստանումը միայն 2 ու կէս ֆունտ։

ԱՌԵԻՏՐԱԿԱՆ ՏԵՂԵԿՈՒԹԻՒՆՆԵՐ .

Լօնդոն Ապրիլի 14.

Բամբակի գները անցեալ շաբաթվայ գներից երկու պենս (մօտ 7 1/2 կոպ.) ֆունտին ցած ընկան։

Պետերբուրգ Ապրիլի 14.

50/0 Լատարեյով առաջին փոխառութեան տոմսակները . . . 109 1/4 ման.

5/0 Լատարեյով երկրորդ փոխառութեան տոմսակները . . . 105 3/8 ման.

Ոսկին 6 մ. 68 կ.

Օդեսա Ապրիլի 12 .

Կուրը Մարտի վրայ երեք ամսով— 312 սանախմ.

Թիֆլիս 1866 Ապրիլի 30.

Բամբակը ծախվեցաւ էս շաբաթ 8 մ. 50 կ.

Բուրդը —

Լեղակը —

Ինգլիզը շաբարը . . . 9 մ. 80 կ.

Ռսինը 11 մ.

Արծաթը 72 պրօբի . . . 60 մ.

— — 84 պրօբի . . . 250 մ.

Ոսկին 6 մ. 75 կ.

ԽՄԲԱՅՐՈՒԹԵՆԻ ԿՈՂՄԻՑ

Մեր զազեթի 7 ՌՁ-ի, 27-դ երեսի երրորդ էջի վրայ տպած է օհերու, 1865 թւին Հնդկացի մահմետականները Մեքսա և այլն պէտք է կարդալ. «Հերու, 1865 թւին Հնդկացի մահմետականները Մեքսա ուխտ գնալիս բերին իրանց հեա խօսերան»։

Մի և նոյն ՌՁ-ի 28-դ երեսի երրորդ էջի վրայ տպած է «ապրեչուսին տալիս են 22 մ. վիթին» պէտք է կարդալ «Թաց կոկոնի փթին տալիս են 22 մ.»

Խմբադրութիւնը յայտնում է, որ ամեն կերպով սրանից յետոյ ուշք կդարձնէ էտպիսի սխալներից աղատ պահելու դաղեթը։